

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ՔԵՐՈՎԷՆ ՊԱՏԿԱՆՅԱՆԸ¹⁾



երովքե Պատկանյանը ծնւ-
վել է 1833 թվին: Նա Ռափա-
յեյ Պատկանյանի հորեղբայր՝
Ստամբուլի հայ եկեղեցու
ծխատեր քահանա Տեր Պետրոսի
որդին է, Ալամդարյանի թոռը:

Քերովքե Պատկանյանը ուսանել է Հա-
ղարյան ձեմարանում և հայագիտութեան
մեջ վարժելով փխտնական Մկրտիչ Էմինի
ձեռքի տակ: Ձեմարանն ավարտելուց հե-
տո, 1851 թվին, լցնացել է Դորպատ, որ հա-
մալարանում աստվածաբանութիւն սովոր-
րի՝ հոգեւորական դասնալու նպատակով, ինչ
որ հոր ցանկութիւնն է հղել: Բայց մի կող-
մից իր մեջ կոչում չգտալով հոգեւորականու-
թեան, մյուս կողմից էլ նեղվելով նյութա-
կան միջոցների սղութիւնից, նա. թողել է
Դորպատը և վերադարձել Պետերբուրգ: Այդտե-
ղից նա վերադարձել է Ստամբուլ և մտել
գիտնադիտիկն կից բացված այն դասարանը,
ուր գիտնադիտիկն շրջանավարտները պատ-
րաստվում էին համալսարանն մտնելու հա-
մար: Այս դասընթացը նա ավարտել է 1853
թվին արևմտի հաջողութեամբ, որ կոչվաւ
յան ուսումնական շրջանի իշխանութիւնն
ուղարկել է նրան Պետերբուրգի Մանկավար-

ժական ինստիտուտն այն պայմանով, որ
ավարտելուց հետո, որոշ տարիներ պար-
տադրաբար ծառայի Կովկասի ուսանալա
դպրոցներում:

1857 թվին, Ինստիտուտի պատմական
գիտութիւնների բաժնում ուսման ընթացքն
ավարտելուց հետո, Պատկանյանը վերա-
աւարտել է Ստամբուլի իշխանութեան հրա-
մանով կարգվել Թբիլիսիի Օրիորդաց ինս-
տիտուտում ուսաց լեզվի և գրականութեան
ուսուցիչ: Սակայն նրան հաջողվել է շուտու-
ազատվել պարտադիր ծառայութեանից և
վերադառնալ Ստամբուլ, որտեղից, 1858
թվին ընտանեկան հանգամանքների պատ-
ճառով, ընդմիջտ փոխադրվել է Պետեր-
բուրգ և իրեն նվիրել ընդհանուր պատ-
մութեան և լեզվագիտութեան ուսումնասի-
րութեան:

Այդ ժամանակները Պետերբուրգի Հա-
մալարանի Արեւելյան բաժնի հայոց լեզվա-
ամբիոնը թափուր է մնացած հղել՝ Մկրտիչ
Բերդյանի հրաժարվելու պատճառով, և
Պատկանյանը ձգտել է այդ պաշտոնը ըս-
տանձնել, որի համար և տկալ է տեղեկա-
պես պարտապել հայերին և լրջորեն պատ-
րաստվել: Ակադեմիայի 1860 թվի բյուլե-
տներում նա առաջին անգամ տպագրել է մի
փոքրիկ աշխատանք, հետեւյալ խորագրով՝

„Catalogue de la Littérature Arménienne
depuis le commencement du II^e siècle jusqu'
que vers le milieu du XVIII^e, 1860“.

Հայոց լեզվի ամբիոնի համար երկու հնա-
րայէր թեկնածուներ են եղել այդ ժամա-
նակ — Քերովքե պատկանյանը և մադիս-
տրոս Կարապետ Նոյանը: Համալսարանի
վարչութիւնը դժգոհացել է ընտրութեան
կատարել, ուստի և որոշել են դիմել Մկրտիչ
Էմինին և իմանալ վերջինիս կարծիքը. նա
ցուց է տվել Պատկանյանին, որը կարգվել
է այդ պաշտոնում:

Պատկանյանը, պաշտոնավարութեան
ուսուցչին երկու տարին, Գիտութիւնների Ակա-

1) Մենք վաղուց միտք ենք ունեցել գրել այս կեն-
ագրականը, ինչպես իր ժամանակ գրել ենք Էմինին,
բայց միշտ ձգձգվել է: Գոհ չենք, որ իսպառ չենք մո-
ռացել: Մենք նրա մասին վարդացել ենք Ռափայեյ
Պատկանյանի նրան հասցեագրած մի խորձ նամակ-
ները: Նա սիրել է նրան, բայց ատել է նրա հարուստ
«մադամին», որ իր ամուսնու հայրենիքի խորթանա-
լու գլխավոր պատճառն է եղել: Մենք չէինք կարող
Քերովքեի մասին հուշեր գրել, որովհետեւ երկու տար-
բեր քաղաքներում ապրած լինելով, չենք կարողա-
ցել հաճախ իրար հետ տեսնել: Այս գրվածքի թվա-
կան տվյալները մենք առել ենք Գրիգոր Խալաթյան-
յի թուղթի հոգվածից (տե՛ս «Братская помощь
армянам», էջ 160):

դեմիայի հանձնարարությունը, թարգմանել է հայկական մի քանի կարևոր պատմիչների գրվածքները, որից հետո, պատրաստել է իր մագիստրոսական շարագրությունը՝ «Փորձ Սասանյան հարստության պատմության՝ հայկական աղբյուրների հիման վրա» (1863 թ.) և մի տարուց հետո էլ՝ դոկտորական, «Հետազոտական ուսումնասիրություն հայ լեզվի կազմի մասին» վերնագրով և հաստատվել հայոց լեզվի օրդինար պրոֆեսորական կոչման մեջ:

Պետերբուրգի Համալսարանի Արևելյան բաժնի հայոց լեզվի օրդինար պրոֆեսոր հաստատվելուց հետո, սկսել են Քերովյան Պատկանյանի ստեղծագործական բեղուն աշխատանքները. համարյա թե իրար հետևից, ամեն տարի լույս են տեսել նրա մի որոշ աշխատանքներ՝ կամ թարգմանություն, կամ ուսումնասիրություն և կամ բնագրի հրատարակություն, որոնք, գլխավորապես, նվիրված են եղել հայոց գրականությանը, պատմությանը և աշխարհագրությանը, որոնց շարքը ընդհատվել է նրա մահից տարի ու կես առաջ, նրա ծանր հիվանդության պատճառով, որ վաղաժամ նրան գերեզման է տարել 1889 թվի ապրիլի 2-ին: Մենք ասում ենք վաղաժամ, որովհետև նրա կյանքի թեքը կտրվել է նրա 45 տարեկան հասակում, երբ նա նոր միայն այրացած, կատարելագործված և բոլորամյակ հմտացած է եղել իր մասնագիտության մեջ և նրա գրչից կարելի է եղել սպասել ավելի ներհուն և շահեկան գործեր:

Պատկանյանը, ընդհանրապես, եղել է լուրջ հայագետ գիտնական և հմուտ արևելագետ: Նրա աշխատանքները նվիրված, կամ լավ է ասել՝ ուղղված են եղել այն վերջնական կետ նպատակին, որ նախ հայ գրականության և պատմագիտության մեջ երեսի վրա թողնված և անհայտ մնացած գանձերը գիտական քննության բովից, անցկացրած ձևով մատուցված լինեն հանուր գիտական աշխարհին և ապա՝ արևելագիտության մեջ չպարզաբանված մութ խնդիրները լուսաբանելու համար օգտագործվեն հին հայկական աղբյուրները, որոնք պատմական մեծ արժեք ունեն:

Այդ նպատակին են ծառայել մի քանի հայ պատմագրների ուսերեն թարգմանությունը Պատկանյանի կողմից և նրանց բնագրերի հրատարակությունը ծանոթությունների և բացատրականներով: Այդ պատմագրերից կարելի է հիշել՝ Մեքենոսի պատմությունը, որի ուսերեն թարգմանությունը հրատարակվել է 1862 թվին (հայկա-

կան բնագրի հրատարակությունը, ընտիր ձեռագիր օրինակից՝ 1879 թ.) Մովսես Կաղանկատվացու և Ղևոնդ Նրեցի պատմությունները, որոնցից առաջին ուսերեն թարգմանությունը հրատարակվել է 1861 թվին՝ «Կոմիտասյան Աղվանից պատմություն» խորագրով, վաղ երկրորդը՝ 1862 թվին, «Խաղիֆների պատմությունը» խորագրով, Մաղաթիա արեղայի «Նետոլաց ազգի» ամբողջական պատմությունը և վարդան Բարձրեբոջու, Ստեփանոս Օրբելյանի, Մամբատ պատմիչի ու Կիրակոս Գանձակեցու պատմությունների ընդարձակ հատվածները՝ ամփոփված երեք գրքի մեջ՝ «Մոնղոլների պատմությունը հայկական աղբյուրների տվյալներով» վերնագրով և այլն:

Այդ նպատակին է ծառայել նաև խորհանցուն վերագրված հայկական «Աշխարհագրությունը», որ Պատկանյանը թարգմանել է ուսերեն և հայ բնագրի հետ միասին հրատարակել 1877 թվին՝ աշխատության հեղինակ համարելով 7-րդ դարի ասողաբաշխ և մաթեմատիկոս Անանիա Շիրակացուն: Ի դեպ, այդ աշխատությունը, բացի Հայաստանի աշխարհագրությունից, պարունակում է նաև արժեքավոր տեղեկություններ Առաջավոր Ասիայի վերաբերյալ:

Պատմական լուրջ աշխատություններ են հանդիսանում նաև մեր արդեն վերև հիշած նրա մագիստրոսական և դոկտորական գիտական շարագրությունները, որ նա ցույց է տվել այն նոր և հարուստ տեղեկությունները, որոնք գտնվում են հայ պատմագրության մեջ պարսից Սասանյան թագավորական հարստության մասին:

Վերջապես, նույն նպատակին է ծառայել նաև նրա մի ուսումնասիրությունը՝ «Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար» (1881 թ.) վերնագրով, արձանագրություններ, որոնք, նրա կարծիքով, կոչված են մեծամեծ փոփոխություններ մուծելու ընդհանրապես արևելյան պատմության և մասնավորապես՝ հայոց պատմության մեջ: Նա իր այդ աշխատության մեջ ամփոփել է այն ամենը, ինչ որ գրված է եղել Հայաստանի բնեղագիր արձանագրությունների մասին և ինչ որ հնարավոր է եղել այն ժամանակ վերծանել: Այդ ուղղությամբ իր կատարած բոլոր հետազոտությունների հիման վրա, նա խորագրուն քննության է ենթարկել հայոց հնագույն պատմության գրվածքները և վստահապես աղբյուր հանդիսացող Մար-Աբասի ատեղծված և եզրակացրել, որ Մար-Աբասը Քրիստոսից 3—4 դար առաջ ապրող հեղինակ չէր կարող լինել և նրա

հաղորդածները ո՛չ այլ ինչ են, եթե ոչ հայկական և ասորական ավանդությունների մի ժողովածու, Կտեղիաս Ասորեանտանի պատմության նմանությամբ հավաքված և կազմած մի ամբողջության մեջ:

Այդպիսով, այդ բոլորից կարելի է եզրակացնել, որ Պատկանյանի գիտական-գրական գործունեությունը գլխավորապես նվիրված է եղել հայ անցյալի, կյանքին, հայ հին գրականության և պատմության կարևոր խնդիրների ուսումնասիրությանը և պարզաբանությանը:

Մենք պակաս կարևոր չենք համարում նրա մի այլ գիտական գործունեությունը, որ նվիրված է եղել մեր բարբառների ուսումնասիրությանը, բարբառներ, տրոնք մինչ այդ անհայտ են եղել հայագետներից շատերին, բայց կարևոր են եղել լեզվագիտության համար, մանավանդ, մեր աղբի գրական լեզուն բուն հայ ժողովրդական լեզվի հայաշունչ բառերի, ոճերի և արտահայտությունների առատ պաշարով հարստացնելու, ճշգրտացնելու համար: Քերովյան Պատկանյանն առաջիններից մեկն է եղել, որ մտադիր է եղել կազմել բոլոր հայ բարբառների նմուշների փչ թե շատ լրիվ ժողովածուները, կցել դրանք բառարանները, քերականական կանոնները և գիտական լուսաբանությունները, հրատարակելով առանձին հատորներով, — մտքի մի շահեկան հղացում, որը, տարաբանաբար, հեղինակի վաղահաս մահվան պատճառով, կիսատ է մնացել:

Բայց այն, ինչ որ նա կարողացել է անել այդ ուղղությամբ, հաջող և խոշոր գործ է եղել, նամանավանդ, որ նա իր կատարածով առաջնորդող է հանդիսացել և ճանապարհ հարթել իր հետևորդների համար: Նա մի հոգիված նախնի է բարբառներից դժկարագունին՝ Ազուլիսի բարբառին, որ 1869 թվին տպագրվել է գերմաներեն: Չորս տարեց հետո, որպես փորձ, ռուսերեն լեզվով հրատարակել է այն ժամանակները հայտնի բոլոր հայ բարբառների նմուշները՝ բնագրերով և անհրաժեշտ քերականական լուսաբանություններով՝ «Ճեռագոտակյան ուսումնասիրություն հայ բարբառների մասին» բանասիրական մի փորձ» (1869 թ.) խորագրով, և դրանից հետո, 1875 թվին, հրատարակել է իր ուսումնասիրությունը երկու բարբառների՝ Նոր Նախիջևանի և Մշո բարբառների մասին:

Նա, Մոսկվայի Համալսարանի հայտնի լեզվագետ պրոֆ. Կորշի հրավերով, մասնակցել է նրա հրատարակությամբ լույս տեսնող «Հնդհանուր գրականության», գի-

տեղեղով նրա մեջ «Հայոց գրականության պատմությունը» որը, սակայն, չի ամբողջացրել, այլ հասցրել է մինչև վեցերորդ դարը:

Նա թողել է ավելի քան 40 անուն հայագիտական գործեր, որոնք բոլորն էլ շահեկան են, բոլորն էլ կարևոր ինչպես Հայոց գրականության և պատմության, այնպես և ընդհանուր արևելագիտության համար:

Քերովյան Պատկանյանը, սկսած 1859 թվից, երբ նա փոխադրված է եղել Ստավրապոլից Պետերբուրգ, այլևս չի դուրս եկել այնտեղից. ա՛յնտեղ տնավորվել է, ա՛յնտեղ առնումնայն, ծառայել, աշխատել և ա՛յնտեղ էլ կնքել իր մահականացումը: Ճիշտ է, եղել է ժամանակ, երբ Ռափայել Պատկանյանը կամեցել է իր օրինակելի պատահողով լիբրածել պրոֆանազիտի, հետո և ռեպուկան դպրոցի կամ դատական գիմնազիտի, և Քերովյան հրավիրված է եղել նրան գործակցության և կամեցել փոխադրվել Նախիջևան, բայց մի անհայտ պատճառով այդ գործը չի հաջողվել, և նա, ընդմիջտ, մնացել է Պետերբուրգում:

Քերովյան Պատկանյանը, իր ուսանողության օրերում, նրան այդ ժամանակները ճանաչողների ասելով, մի պնդել սիրող փայլուն երիտասարդ է եղել, բայց հետո, երբ նա ավարտել է, իր պարտավորված ընդթի հետևանքով, բոլորովին առանձնաենյակի մարդ է դարձել: Նա կտրված է եղել Հայաստանից և, ընդհանրապես, խուսափել է խառնվել հայ ազգային գործերում, խառնվել է նույնիսկ տեղի հայ գաղութի գործերում կենդանի մասնակցություն ցույց տալուց: Մտեր կաթողիկոսն անձամբ դիմել է նրան և ձեմարանի տեսուչ հրավիրել, իբրև նման ոմեցող հայագետ, հեղինակավոր անձնավորություն որ պիտի բավարարեր ձեմարանի բոլոր պահանջներին, սակայն, նա կտրականապես հրաժարվել է, պատասխանելով, թե իր ծառայության կենսաթոշակի ժամանակը դեռ չի լրացել:

Նրկու և Ներսիսի Քերովյան և Ռափայել Պատկանյանները, մոտ հարաբերության մեջ են եղել միմյանց հետ. եղբայրաբար սիրելու հարգել են իրար ոչ միայն այն պատճառով, որ մոտ, հայրենակից ազգականներ են եղել, այլ և՛ որովհետև իրար սիրող հասակակից ընկերներ են եղել իրենց աշակերտության օրերում կազարբան ձեմարանում և ուսանողության օրերում՝ Պետերբուրգում: Նրանք այդպես էլ մոտ և սիրով մնացել են, մինչև որ բաժանվել են իրարից՝ Քերովյան ընդմիջտ Պետերբուրգում մնալու, իսկ Ռափայելը՝ Նոր Նախիջևան վերադառնալու հե-

տեանքով: Իրենց մոտիկության և իրար սիրելու մասին՝ Քերովյան իր մի նամակում գրել է Ռաֆայելին. «Մտքի վերա շատ ուսեր կան, տեսնում ես, որ նոքա մեկ մեկի արեւակից ազդակամներ են, բայց միշտ հեռու են մնում միմյանցից»:

Քերովյան Պետերբուրգից (Լենինգրադից) երբեմն գալիս էր Մոսկվա, և ամեն անգամ այցելում էր ձեռնարանը, իր նախկին ուսման դպրոցը և լինում էր միշտ լիկենոնում: Մենք, լիկենոնի հայ ուսանողներս, տեսնում էինք նրան, ճանաչում էինք, հարգանքով ընդունում նրան և ճանապարհ ձգում:

Լավ ենք հիշում, մի անգամ նա տեսուչ Գեորգ Քանանյանի հետ գալիս էր պրոֆեսորանոց, իսկ մենք հայ վեց-յոթ ուսանողներ միջանցքում խմբված, ըստ սովորության, հարգանքով ողջունեցինք նրան: Նա թողեց Քանանյանին, մոտեցավ մեզ և մի քանի խրատական խոսքեր ասաց մեզ: Մենք, իհարկե, այժմ չենք կարող բառացի վերարտադրել, բայց լավ ենք հիշում նրա ասածների ընդհանուր իմաստը. «Դուք արեւելագիտության ուսանողներ եք, ես էլ այդ գիտությունների ուսուցիչներից մեկն եմ. ասել է թե՛ մենք, մեր հակումներով, մոտ ենք միմյանց, բարեկամներ ենք, և ես, որպես տպագրի, պարտավոր եմ ձեզ խորհուրդներ տալ: Դուք, բարեկամներ, կոչված եք մի մեծ և լուրջ գործի համար, որի համար պահանջվում է մեծ բարեխղճություն: Ձեզ վրա դրված է բարոյական մի մեծ պարտք—արդարացնել ձեռնարանի հիմնադիր, արժանաճիշատակ Լազարյանների ամվանդը— ծառայել հայ ժողովրդի կուլտուրական շահերին. մի պարտք, որ դուք երբեք չպիտի մոռանաք և ամեն կերպ պիտի աշխատեք արդարացնել ձեռնարանի հույսերը»:

Նա խոսում էր բարձր ձայնով, դասավորության հատուկ շեշտով և հեղինակության: Նրա մազերն ալեխառնվել էին, գլուխը սակավ ինչ ճաղատ էր:

Քերովյան Պատկանյանը «ծանրաշարժ և զժվարընթեռնելի» գիտական գործերից բացի, գրել է և մի քանի երգեր, որոնցից հայտնի են և ընդհանրացած «Երամբամբուլի», «Նըրա՛յրը, մի շուրջ ժողվեցե՛ք», «Բն ծխաբարձն ձեռիս», «Ժնձ համար չէ գարնան գալը», «Վերջին վարդ» և մյուսները (տե՛ս այս մասին «Արձագանք», 1889 թ., էջ 193—196):

Այս երգերը նա գրել է իր ուսանողության օրերում, հատկապես իր ուսանողության «դորպատյան շրջանում», երբ նա ուրախ, զվարթ, անհոգ կյանք է վարել Ռաֆայել Պատկանյանի, Գրիգոր Աղափիրյանի և մյուսների ընկերակցությամբ: Ուսանողական այդ ուրախ շրջանը հետագայում նա միշտ հիշել է ու մի անգամ էլ դնացել է Դորպատ՝ իր հիշողության մեջ վերականգնելու ուսանողական քաղցր օրերը: Նա իր նամակների մեջ բազմիցս խնդրել է Ռաֆայելին, որ նա իր հարուստ ընդունակաբարձի իրենց մանկության ոսկի շրջանը, քանի որ ինքն իր չոր ընդունակի վիճակի չէ անել այդ:

Քերովյան Պատկանյանը, ինչպես Երևում է, լավ հարաբերության մեջ չի գտնվել հայ գիտնական Մկրտիչ Էմինի հետ: 1873 թվին Էմինը հրատարակել է իր գիտական գրվածքներից մեկը. «Вахаги вишанаках»: Քերովյան Պատկանյանը խստորեն քննադատության է ենթարկել այդ գրվածքը: Էմինը, «Ответ на замечания Патканяна», խորագրով մի գրվածքով, նույն խստությամբ, պատասխանել է Քերովյանին: Գրաքննչական ստյանը, սակայն, արգելք է դրել այդ «պատասխանի» վրա, որպես մի հրատարակության, որ կարող է վարկաբեկել պրոֆեսորին ուսանողների առաջ: Էմինը բողոքել է, բայց ատյանը հաստատ է մնացել իր որոշման վրա: Էմինը գրվածքից դուրս է հանել խիստ արտահայտություններ և վերստին իր «պատասխանը» ներկայացրել է գրաքննչության, որ այս անգամ արդեն տպագրվել է (տե՛ս այս մասին «Էջմիածին», 1947 թվի նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համար, «Գիտնական Մկրտիչ Էմինի նամակները, հասցեագրված Սարգիս Խորասանյանին», նամակ երկրորդ, էջ 43—44):

Մենք սրանով վերջացնում ենք մեր գրքի վածքը: Հուշեր չեն, որ մենք գրեցինք այստեղ, այլ կենսագրական իր էական գծերով, այսինքն՝ Քերովյան Պատկանյանի գիտնական կյանքն աշխատեց, ինչպես որ նա կա և այն մեծությամբ, ինչ մեծություն նա ունեցել է:

Քերովյան Պատկանյանը հայագիտության աչքի ընկնող դեմքերից է: Նա խոշոր տեղ ունի Հայոց պատմագիտության մեջ: Նրա մասին դեռ շատ պիտի գրվի և խոսվի:

